

## Բ Ա Ր Ձ Ր Ա Ս Տ Ի Ճ Ա Ն

### Հ Ո Գ Ե Ի Ռ Ր Ա Կ Ա Ն Հ Ի Ի Բ Ե Բ Մ Ե Բ Մ Է Ձ

Հակառակ երկու տարիներէ ի վեր Ս. Երկրիս մէջ շարունակուող քաղաքական խառնակ եւ անկայուն վիճակին, Քրիստոսակոխ Սրբավայրերը չեն դադրած իրենց քաշելէ աշխարհի տարբեր եւ հեռաւոր երկիրներու մէջ բնակող քրիստոնեաները: Վերջին շրջանին Երուսաղէմ այցելեցին երկու բարձրաստիճան հոգեւորականներ — Աւստրիոյ Կարտինալը՝ Հանս Կրօէր եւ Հարաւ. Ափրիկէի Անկլիքան Եկեղեցւոյ պետ եւ Նօպէլեան Խաղաղութեան Մրցանակի դափնեկիր՝ Տէգմօտ Քութու Արքեպս.: Երկուքն ալ իրենց այցելած Սրբավայրերու կարգին չմոռցան ուխտի գալ Ս. Կլիստոսին եւ այցելել Հայոց Գատրիարքարանը:

Շաբաթ, 25 Նոյեմբեր. Կիրակմուտքի ժամերգութեան պահուն, բարապաններու առաջնորդութեամբ, Ս. Յակոբանց Մայր Տաճար այցելեց ուխտաւորաբար Ս. Երկիր ժամանած Վիննայի (Աւստրիա) Կարտինալը՝ Հանս Կրօէր, առաւելաբար հոգեւորականներէ կազմուած իր շքախումբով: Մեծապատիւ հիւրը առաջնորդուեցաւ եկեղեցւոյ դասը եւ արարողութենէն ետք ստացաւ հարկ եղած բացատրութիւնները սրբավայրի մասին Գերշ. Տ. Դաւիթ Եպս. Սահակեանէ, որ տիրապետած է Կերմաներէնի: Յետոյ բոլորն ալ բարձրացան Գատրիարքարանի դահլիճը, ուր ընդունուեցան Նորին Ամենապատուութեան եւ Միաբանութեան այլ անդամներուն կողմէ: Սիրալիր մթնոլորտի մէջ եղան բարի գալուստի ճառեր եւ փոխանակուեցան յուշանուէրներ: Ապա լուսանկարուեցան (տեսնել Քաղաքագրաց Էջր): Կարտինալն ու իր հետեւորդները լուսագոյն տպաւորութիւններով հրաժեշտ պահին Ս. Գատրիարքէն, իրագնկ ըլլալէ ետք Հայ Սինդ պանծալի փառքին ու դիրքին:

Շաբաթ, 23 Դեկտեմբեր, կէսօրէ առաջ ժամը 11,30ին, Մայրավանք ժամանեց Ս. Մննդեան ասեկին առթիւ ուխտաւորաբար Ս. Երկիր այցելող Հարաւային Ափրիկէի Անկլիքան Եկեղեցւոյ պետ եւ Նօպէլեան Խաղաղութեան Մրցանակի դափնեկիր Տէգմօտ Քութու Արքեպս.: Իրեն կ'ընկերանար Երուսաղէմի Անկլիքան Արքեպս. Սամիր Քաֆիթին: Սեծայարգ հիւրը մտաւ Մայր Տաճար, ուր Ս. Կլիստոսի ուխտէն ետք Վերախ լինող շարականով առաջնորդուեցաւ եկեղեցւոյ դասը, ուր Քաֆիթի Արքեպս.ը տուաւ իրեն հարկ եղած բացատրութիւնները սրբավայրի մասին եւ խօսեցաւ Հայ եւ Անկլիքան Եկեղեցիներու միջեւ գոյութիւն ունեցող սերտ յարաբերութեանց շուրջ, որուն ապացոյցն է Աւագ Հինգշաբթի օր, Ոստալուայի կարգէն ետք, Անկլիքան Եպս.ին զգեստաւորուած Աւագ Սեղան բարձրանալն ու Աւետարան կարդալը: Յետոյ բոլորն ալ բարապաններու առաջնորդութեամբ բարձրացան Գատրիարքարանի դահլիճը ուր, ի բացակայութեան Ս. Գատրիարք Չօր, բարձրաշնորհ հիւրը ընդունուեցաւ Գատր. Փոխանորդ Կերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեանէ եւ այլ Միաբան Սրբազաններու կողմէ: Փոխանորդ Սրբազանը իրագնկ դարձուց հիւրին Ս. Երկրին ու Ս. Տեղեաց մէջ Հայ Եկեղեցիին ու հայութեան դիրքն ու վայելած նախանձելի դիրքին մասին եւ փորձեց նմանութիւն մը գտնել, զէթ քաղաքական հայեցակէտէ, մեր եւ այն ժողովուրդին՝ որուն ներկայացուցիչն է եւ որուն ազատագրութեան համար կորովի պայքար մղած է մեծ հիւրը, իրրեւ իրաւազրկուած եւ խաղաղութեան ըղձանքով տուչորդ ժողովուրդներ: Ի պատասխան, մեծապատիւ հիւրը յայտնեց իր համակրանքը հանդէպ հայ ժողովուրդին, որուն փորձանաշատ պատմութեան մէջ փորձեց տեսնել Աջը նախախնամութեան, զինք դարբերու մաշուժէն ապահով՝ մինչեւ մեր օրերը պահող առոյգ ու կենսունակ: